ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3100 - Ա **22 ապրիլի 2009թ.**

ՎԱՐՇԱՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 41 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ԳԱՐԵԳԻՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ, ՎԱԶԳԵՆ ԶԱՎԵՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ԶԱՎԵՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ԱՐԱՄԱՅԻՍ ԶԱՎԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սարգիս Գարեգինի Նազարյանի (ծնված 02.04.1936թ.), Վազգեն Զավենի Մուրադյանի (ծնված 13.11.1952թ.), Սարգիս Զավենի Մուրադյանի (ծնված 04.01.1955թ.), Արամայիս Զավենի Մուրադյանի (ծնված 02.05.1962թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Վարշավյան փողոցի հ.41 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1150.9քմ, որից 875քմ մակերեսով հողամասը Սարգիս Գարեգինի Նազարյանին, Վազգեն Զավենի Մուրադյանին, Սարգիս Զավենի Մուրադյանին, Արամայիս Զավենի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամաս է (վկայական տրված 09.02.2001թ. հ.369143): Օրինական հողամասին կից օգտագործվող 275.9քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1991 թվականը, 09.03.2004թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման 02.18.2005թ. հ.5688, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 15.04.2009թ. հ.20/2-Ե/234 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.04.2009թ. հ.20ել-3010 եզրակացությունը, համաձայն որի Վարշավյան փողոցի հ.41 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Վարշավյան փողոցի հ.41 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սարգիս Գարեգինի Նազարյանի, Վազգեն Զավենի Մուրադյանի, Սարգիս Զավենի Մուրադյանի, Արամայիս Զավենի Մուրադյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 875քմ մակերեսով հողամասին

կից 275.9քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 275.9քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Վարշավյան փողոցի հ.41 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Վարշավյան փողոցի հ.41 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սարգիս Գարեգինի Նազարյանի, Վազգեն Զավենի Մուրադյանի, Սարգիս Զավենի Մուրադյանի, Արամայիս Զավենի Մուրադյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ